

շարժի օրը՝ բայց ժողովուրդն այդ յիշատակը կապում է իրօք Վարդապետի հետ և հանդիսաւոր ուխտագնացութիւններով պատուում այն տեղը՝ ուր ամփոփուած են ս. Թովհանէս կարապետի նշխարները։ Որովհետեւ աւետարանական հաշուով յուլիս 11-ին է ընկնում ս. Թովհանէս ծնունդը՝ ոմանք փորձել են հնումն այս տօնի հետ կապել ծննդեան յիշատակը մանաւանդ որ նշխարների փոխադրութեան տօնն առաջ Մաւսարդի 1-ին էր տօնուում։ Իսկ Հայոց թուականի հաստատութեան տարին Մաւսարդի 1-ը յուլիսի 11-ին էր. բայց այս հաշիւը ընդունելով թիւն չի գտել երեւի նորա համար, որ նշխարների փոխադրութեան տօնն աւելի տեղական բնաւորութիւն ունի՝ ս. կարապետի ուխտատեղիների հետ է կապուած, և անյարմար էր նորա հետ ծննդեան յիշատակը զուգորդել, որ ի զապախարի այնպէս հեշտութեամբ զուգորդուում է Զրիստոսի ծննդեան և Մկրտութեան յիշատակի հետ։\*

Բ. Ամենայն Հայոց հայրապետների Օծման տարեգարձը շարժական է, երբ կապուած է լինում մի նշանաւոր տօնի հետ. օրինակ ներկայ Վեհափառ հայրապետը Վարդգայս. Մաշի տօնին է օծուել և իւրաքանչիւր տարի նոյն տօնին կատարուում է տարեգարձը. ուրիշները նոյն կերպ կատարել են Հոգեգալստեան, ս. Էջմիածնի տօնին ևլն. բայց երբ օծումը օրէն առթիւ մի հասարակ օր է տեղի ունենում ամսաթուի հետ կապուած, նոյն ամսաթուին և տարեգարձն է կատարուում։

Գ. Օրթոդոքս եկեղեցին այս գէպքում ինչպէս և ուրիշ ամեն մի գէպքում եկեղեցական կարգերի իւրաքանչիւր արտաքին նշանին խորհրդաւոր նշանակութիւն տալով՝ պահանջում է մասների որոշ դասաւորութիւն խաչ հանելու ժամանակ։ Մեղանում ևս շատերը վիճաբանութեան միջոցին իրենց հարեաններին համակերպել կամենալով՝ աշխատել են ցոյց տալ իրրեւ թէ մենք նոյնպէս որոշ արտաքին ձև ենք պահում խաչ հանելիս. օր. բութ մատը կպցնում ենք միջին

մատին և վերջին երկու մասները ափի մէջ սեղմում։ Բայց իրօք մեր եկեղեցին ծիսակատարութեանց արտաքին նշանների նկատմամբ բոլորովին տարբեր հայեացք ունի և ոչ մեր հայրերը մտածել են երբէք և ոչ մենք ենք խաչ հանելիս մտածում թէ ինչպէս պէտք է զնել մասները. մենք թողնում ենք նոցա հանգիստ իրենց բնական դիրքի մէջ։

Դ. Օրինօք ոչ մի եկեղեցական զգեստ կամ անօթ, առանց մայր մաշտոցի մէջ իւրաքանչիւրի համար սահմանեալ կարգով օրհնուած լինելու՝ պէտք է գործածութեան մէջ չմտնի։

Ե. Աւետեաց տօնի համար աւագ շորթի բոլոր օրերում պէտք է պատարագ լինի. բացի աւագ ուրբաթից, երբ չի կարող երբէք պատարագ լինել, որովհետեւ բուն երկնային անմահ Պատարագի յիշատակի օրն է այդ։

Եիշեալ պարոնը մի վեցերորդ հարց ևս առաջարկել էր, թէ արդեօք զատկի և Զրօհնեաց նաւակատիքին երբ իւր գործածել թոյլ է տրուում՝ բուսական իւղի համար է ասած այդ, թէ կովի՞ իւղի համար. սակայն այդ հարցի պատասխանը Օրհնից դուրս երեւի ամէնքը գիտեն՝ Մաւկատեաց տօներին շատ անգամ կովի իւղ վայելած լինելով։



## ՍԵՒՈՆԱՐՈՒՄ.

Այս տարի մայիսի 23-ին լրանում է Զիրորամոյ Սաւոնարոլայի մահուան չորս-հարիւրամեակը, որ իտալիոյ «վերածնութեան դար» նշանաւոր գործիչներից մէկն էր։

Միջին դարու համարեա ամբողջ ընթացքում մանաւանդ վերջերն, իտալիան բաժանուած էր զանազան մանր մուշր իշխանութեանց՝ մի հանգամանք, որ անշուշտ ի միջի այլոց նպաստեց իտալիոյ մտաւոր յառաջադիմութեան, ինչպէս որ նոյն երեւոյթը նկատելի է Գերմանիայում և աղօտ կերպով մեր պատմութեան մէջ։

\* Տեւ. Վարդ Սրբոյ. Վեկնիկ 1811. հր. 25—28։

Սակայն մի արտաքին, ըստ երևոյթին իտալական կեանքի հետ բոլորովին կապ չունեցող, պատմական զէպք եղաւ ամենազինաւոր առիթով որով իտալիան իւր հռչակաւոր գրական գործիչներին՝ Դանդէից, Բոկաչիոյից և Պետարքայից յետոյ ունեցաւ իւր գեղարուեստի սակզծագործողները ինչպէս են Միքէլ Անջելոյ, Լէօնարդոյ Դաւինչի, Կորնէջիոյ, Ռափայէլի և եկեղեցու ազդեցիկ վարդապետները՝ Սաւոնարոլա և այլք, որոնք իտալիան վերանորոգեցին, նորան վերածնութիւն տուին։ Այս զէպքն է՝ Կ. Պօլսի առումն Թուրքերի ձեռքով 1453-ին։ Վայրենի ցեղի անլուր բարբարոսութեանց մատնուած քրիստոնէայ յոյներին շատերն Կ. Պօլսի նուաճումից յետոյ հազիւ կարողացան իրենց կեանքն ազատել իտալիա փախչելով, ուր սիրալիր ընդունելութիւն գտան ամբողջ իտալիայում, մանաւանդ Հռովմում և Փլորենցիայում։ Այս յոյներն ահա սկսեցին իտալիայում յունարէն ուսուցանել և սէր ներշնչել զէպի յունական դասական անցեալը, որ և իտալիոյ յառաջագիմութեան համար նոր զարկ եղաւ և իւր ազդեցութիւնն ունեցաւ գերմանական երկրներում։ Հռոմանիստների միջոցով, ապա նաև Նւրուպայի այլ երկրներում։

Վերածնութեան դարում Փլորենցիան, ուր իշխում էր Մեդիչեան մեկենաս տոհմը, իտալիոյ Աթէնքն էր։ Այս դարու նշանաւոր գործիչներից ոմանք Փլորենցիացի են, ինչպէս Դանդէ, Բոկաչիոյ և Պետարքայ, Լէօնարդոյ Դաւինչի, և կամ այստեղ են ապրել և գործել զօ. Մաքիաւէլլի և Սաւոնարոլա, որ կրօնական յեղափոխութեան (րեֆորմացիա) կարապետներից մինն է։

Թերևս ոչ մի նշանաւոր անձի մասին պատմութիւնն այնչափ տարակարծիք չէ, որչափ Սաւոնարոլայի մասին, կարծիքներ, դատողութիւններ, որոնք ոչ միայն հակասական, այլև հակադիր են միմեանց՝ մեծ թուով ընծայում են մեզ բազմաթիւ հին և նոր հեղինակների, աստուածաբանների, պետական անձանց և բանաստեղծների գրուածքներն և ուսումնասիրութիւնները սորա գործունէութեան մասին, և միայն նորագոյն ժամանակներ

ըստ գիտնականների հետախուզութեանց շնորհիւ, որոշուեցաւ նորա իսկութիւնը։ Սաւոնարոլայի գործունէութիւնն կարելի է կարծօրէն այսպէս սահմանել. նա պատմաւ ու նահատակ դարձաւ Փլորենցիայում եկեղեցական-քաղաքական ընթորմացիայի փորձին, որ իտալիայում իւր նախորդն էր ունեցել յանձին Արնօլդ Բրէսչիացու։

Հիերոնիմուս Սաւոնարոլա կամ Փրա Ջիրօլամօ ծնաւ 1452 ամի սեպտեմբերի 21-ին Փերարայում մի ազնիւ տոհմի պատկանող ծնողներից։ Իւր ժամանակի կրթութիւնը նա լիովին ստացաւ Դեռ մանկութեան օրերում սիրում էր միայնութիւնը, և հետեւելով իւր սրտի հակման՝ 23 տարեկան հասակում 1485-ին փախաւ Բօլոնիա և մտաւ մի դոմինիկեան վանք, որտեղից մի նամակով իւր հօրը բացատրում է պատճառը և ներում խնդրում։ Նա չէի կարող իտալացի ժողովրդի ահագին մեծամասնութեան անչափ անաստուածութեան դիմանալ։ Ամենուրեք ես տեսնում էի առաքինութիւնն անարգուած և մոլութիւնը յարգուած։ Նա ուսաւ աստուածաբանութիւն և ցեղայն ուսուցիչ կարգուեցաւ։ Սիրով կարդում էր Թովմաս Աքուինացի և Ս. Օգոստինոս, բայց մանաւանդ սուրբ Գիրքը, որ համարեա թէ բերան զիտէր, յատկապէս մարգարէներն ու յայտնութիւնը, որոնց վերայ հիմնում էր իւր ազդեցիկ քարոզները։

Սկզբում սակայն նա յաջողութիւն չունեցաւ, ինչպէս երբեմն Դիմոսթենէս, ուստի թողեց առժամանակ և երբ յանկարծ Բրիտչիայում 1486-ին վերսկսեց իւր քարոզութիւնը, երեւեալ նորա թաքուցեալ ճարտասանական տաղանդը, քարոզչական ձիրքը։ Նա յայտնեց որ իտալիային և մանաւանդ Բրեսչիային սարսափելի պատուհաս է սպասում։

Նորա գործունէութեան նախերգանքն եղաւ այս. իսկականը սկսուեցաւ, երբ նա իւր 38 տարեկան հասակում 1490-ին Փլորենցիոյ Դոմինիկեան Սան-Մարկոյ (Սուրբ Մարկոս) վանքում լեկտոր (դասախօս) նշանակուեցաւ։ Նորա կեանքի զխաւոր նպատկներն էին եկեղեցին վերանորոգել և իտալիան ազատել, որով նա իւր ժամանակի Փլորենցիոյ պետութեան հիմունքները ցնցեց։

բայց և իւր եղբերական վախճանը պատրաստեց:

Դանտէի հայրենիք Փլորենցիոյ հասարակապետութիւնը ժ.Գ. դարում հարստութեամբ զօրութեամբ և կրթութեամբ գերազանցում էր բոլոր իտալական քաղաքներին: Եւր ժ.Ե. դարում Մեդիչեան առեւտրական տունը իւր հարստութեան և խելացի ներկայացուցիչների շնորհիւ բարձրացաւ և մինչև իշխանութեան հասաւ Անոյ գետի վերայ շինուած այս քաղաքը նա նորազարթ դասական գրականութեան և գեղարուեստի կենտրոն դարձուց: Կոզիմոյ Մեդիչին (+1464), որին իբրև իւր ժամանակի Ռոթշիլդի բոլոր պատկաւոր պետերը պարտապան էին, հովանաւորում էր և առատօրէն նպաստում գիտութեանց ու գեղարուեստի բարգաւաճման: Թէ իւր հակամբ և թէ հեռաժամ քաղաքագիտութեամբ, նա առաջինն եղաւ, որ հանրապետութեան ձևի տակ միապետ դարձաւ: Իսկ նորա թոռ Լորենցոյ Վսեմափայլը կամ Հոյակապը (+1492) թողեց առեւտուրը, մի իշխանութեան հետ ամուսնացաւ և կրում էր Principe պատուանունը: Սա, որ մի նշանաւոր պետական անձն էր և բանաստեղծ, ըստ ամենայնի նպաստում էր գիտութեանց և գեղարուեստի ծաղկման: Չնայելով որ ամէնքը սիրում էին նորան, այնու ամենայնիւ նա հազիւ հազ ազատուեցաւ իւր դէմ կազմուած մի դաւադրութիւնից, որի գլուխն էին անցել պապի մի ազգականը և մի արքեպիսկոպոս: Մի պարագայ, որով ժամանակի եկեղեցու դրութեան մի տխուր պատկերն է մեր առաջև բացում: Լորենցոյի աւագ որդին Պիերոյ իրեն յաջորդեց, իսկ կրտսերը Զիոփանին, որ 13 տարեկան հասակում կարգինալի խոյր էր կրում, յետոյ պապ դարձաւ Լէոն Ժ. անուանով:

Երբ ուրեմն Սաւոնարոլան երևեցաւ իբրև սաստող քարոզիչ և հանրապետական գործիչ Փլորենցիայում, ժողովուրդը կորցրել էր իւր ազատութիւնը և յանձնել մի քանի քարաւոր և խելացի առեւտրական տան: Այստեղ աշխարհիկ կրթութիւնը, հեթանոսական գիտութիւններն և գեղարուեստը ծաղկել էին, կեանքի զգայական վայելքներն աճել էին, ելեմուտքը քայքայուել էր և եկեղեցին

ընկել: Այս շրջանի համար կարելի էր ասել Լէնաուի այն խօսքը, որ նա գնում է Սաւոնարոլայի բերանը. «Հեղինների գեղարուեստները չէին ծանաչում Փրիչին և նորա լոյսը»:

Միւս կողմից պէտք է չմոռանալ, որ այդ ժամանակ պապական զահն էր բարձրացել Ալէքսանդր ՎԻ Բօրջիա պապը, որի անունն ու ազգանունը կապուած է ամենայն տեսակ երևակայելի և աներևակայելի անառակութեանց և անբարոյականութեանց հետ: Ահա Մեդիչեան իշխանական տոհմի և այս վատ պապի հետ կեանքի և մահու կռուի բռնուեցաւ Սաւոնարոլան:

Սաւոնարոլան իւր քարոզչական գործունէութիւնը սկսեց իւր խցից, ապա շարունակեց վանքի պարտիզում. բայց այս էլ շուտով ունկնդիրների համար նեղ էր, ուստի անցաւ եկեղեցին: Այստեղ 1491-ին, օգոստոսի մէկին, խմբուած մեծ բազմութեան առաջ մեկնեց ԅովհաննու յայտնութեան մի հատուածը, որից հետեւալ գործնական հիմնական միտքը հանեց. «Եկեղեցին պիտի վերանորոգուի, բայց նախ Աստուած ծանր ցասումն պիտի առաքէ Խտալիոյ վերայ, և այն էլ շուտով»: Ս. իւր քարոզներում Մեդիչեան այս ինքնագոհ փայլուն շրջանի գատարկութիւնն ու ոչնչութիւնն էր ցոյց տալիս. նա ոչ մի դատակարգի չէր ինայում և յարձակում էր մանաւանդ հոգեւորականների վերայ, նոցա անբարոյական կենցաղի համար: Մարգարէի լրջութեամբ և սրտաւետութեամբ սաստում էր նա իւր քարոզներով. «Ձեր մեղքերն, ասում էր նա, ինձ մարգարէ են դարձնում: Յարգ եւ Եփեսոս մարգարէն էի, որ Եփեսոսեացւոց խրատում էր: Բայց ձեզ եմ ասում, եթէ ինձ չսէք, եւ կղաւնամ Երեմիան, որ Երուսաղէմի անկումը գուշակեց և ապա կործանեալ քաղաքը ողբաց, որովհետեւ Աստուած կամենում է իւր եկեղեցին վերանորոգել և այս երբէք առանց արեան եղած չէ»:

Այստեղ պէտք է շեշտել այն բանը, որ Ս. ի վարդապետութիւնը դաւանական խնդիրների չէր վերաբերում, այլ բարոյական կրօնական մի յեղափոխութիւն էր, բայց սերտ կապուած Խտալիոյ քաղաքական վերա-

Ծնութեան և Փլորենցիոյ հանրապետութեան վերահաստատութեան հետ:

Փլորենցիայում մի տարի դործելուց յետոյ Ս. 1491-ին ընտրուեցաւ Սան-Մարկոյի վանահայր, բայց ըստ սովորութեան չնկատուեալ տեղութեան պետին: Այս բանս աչքի էր ընկնում մանաւանդ այն պատճառով որ ինչպէս Լորէնցոն այնպէս և իւր պապ Կոզմոյ հովանաւորում էին վանքը և նշանաւոր նուէրներ էին արել: Բայց Ս. խուսափում էր Լորէնցոյից և նորա բարեկամութիւնից, որին ձոխ աշխարհիկ մարդուն՝ ժողովրդի ազատութեան թշնամի էր համարում: Լորէնցոն շատ աշխատեցաւ շահել այս խստաբարոյ կրօնաւորին, որ իւր քարոզներում երբեմն շանթեր էր արձակում Մեդիչեան արքունիքի դէմ: Եւ ջանաց քաղաքավարութեամբ, խելացութեամբ մինչև անգամ կաշառքով զրաւել այս յարգուած և ազդեցիկ հոգեւորականին, նաև պապի օգնութեան դիմեց, սակայն ի զուր: Ս. իւր քարոզներով խարխուլում էր նորա զօրութիւնը:

Այս միջոցին Լորէնցոն (+1492) ծանր հիւանդացաւ և բժշկական անզօր միջոցներից յետոյ զգալով իւր վախճանը, ցանկացաւ իւր վանքի վանահայր Սաւոնարոլային խոստովանուել և հաղորդուել՝ այն «միակ հոգեւորականին» որին հաւատում էր: Ս. եկաւ, բայց պահանջեց նախ հաւատ, ապա վերադարձնել անարգարութեամբ ձեռք բերած հարստութիւնը, այլև՝ ըստ ոմանց, ժողովրդին ազատութիւն:

Լորէնցոյին յաջորդեց իւր որդին Պիէրոյ (Պետրոս), որին հայրը տխմար մականունն էր տուել, իսկ միւսին տարին իննովկեն տիոս Ը. պապից յետոյ դահ բարձրացաւ, ինչպէս յիշեցինք, տխրահռչակ և վատահամբաւ Աղէքսանդր V՝ Բօլջիա պապը: Ոչ մէկի և ոչ միւսի հետ չէր կարող Ս-ի նման մի սրբանուէր անձն հաշտուել: Հալածեցին նորան երկուսն էլ, և թէպէտև մի առժամանակ նա Բոլոնիա հեռացաւ, բայց շուտով վերադարձաւ: Մի նոր ծրագրով նա իւր վանքը վերանորոգեց, արգելեց յարաբերութիւնը քաղաքի հետ, մինչև իսկ մտածում էր վանքը քաղաքից դուրս փոխադրել: Բոլոր արեղա-

ներին պարտաւորեց աշխատել, որոնց աշխատանքի վաստակը վանքի եկամուտի զխաւոր տղերւններից մինը պիտի լինէր: Վանքում կուտակուած հարստութիւնը պատուիրեց վաճառել և աղքատներին բաժանել և այնուհետև նոր կեանք սկսել: Այսպիսով յոյս ունէր մաքրել արեղաների կենցաղը և այս բանում ամէնից աւելի ազդում էր ի հարկէ իւր անձի օրինակով: Սուրբ Մարկոսի հրաշակը տարածուեցաւ ամբողջ Իտալիա: Այնուհետև Ս. Թոսկանայում Դոմինիկեան նոր միաբանութիւններ հաստատեց, որոնց վերատեսուչ կարգուեցաւ, այցելեց սոցայ և ժողովուրդն ամէն տեղ ցնծութեան ձայներով ընդունում էր նորան, առանց ուշք զարձնելու հոգեւորականների յորդորներին և կառավարութեանց սպառնալիքներին:

Ս-ի ազդեցութիւնը քանի զնում մեծանում էր, նա մարգարէի հռչակ էր ստացել գուշակելով, «Թէ շուտով մի փոթորիկ պիտի բարձրանայ, որ լեռներ պիտի սասանեցնէ, Ալպեան լեռներով Կիւրոսի նման մինը պիտի Իտալիա արշաւէ»: Եւ յիրաւի այնուհետև շուտով 1496-ին Կարլ Ը. Իտալիա արշաւեց Նեապոլսին տիրելու: Պիէրոն անձնատուր եղաւ և մի նախատալից պայմանի զօրութեամբ բոլոր ամրոցները Փրանսացւոյ յանձնեց, ժողովուրդը կատաղեցաւ, ոտքի կանգնեցաւ: Մեդիչեանք փախան, ծերակոյտը նոցա դաւաճան հրատարակեց, Իսկոյն Ս. ժողովուրդն եկեղեցի հրաւիրեց, և Փլորենցիոյ օրէնսդիր ընտրուեցաւ, որի կառավարութեան սկզբունքներն էին. ա. Երկնչիւր Աստուծուց. Բ. Հանրապետութեան բարիքը քո սեփականից գերադասիւր, Գ. Ընդհանուր ներումն. Դ. մի խորհուրդ-ծերակոյտ, ինչպէս Վենետիկինն էր, բայց առանց զոժերի. «Աստուած է միայն քո թագաւորը, ո՞ր Փլորենցիա ինչպէս որ նա Սամուէլին սասց, երբ Իսրայէլացիք թագաւոր էին խնդրում»: «Viva Christo, viva Firenze» կոչեց ժողովուրդը և նորան յանձնեց, որ կազմակերպէ պետութիւնը: Երեք տարի նա էր վարում Փլորենցիոյ հանրապետութեան գործերը: Ապօրինի կերպով ձեռք բերուած հարստութիւնն վերադարձնում էին, ռիսկիմ թշնամիք միմեանց հետ գրկախառ-

նուում էին, մի անօրինակ սիրով ոգևորում էին ամենքը, աշխարհային բոլոր խաղերն ու զուարճութիւններն, զբաղմունքներն ու զբոսանքները դադարեցան։ Շատ կանայք թողեցին իրենց երիկներն ու վանք մտան, ուրիշներն ամուսնանում էին ողջախոհութեան ուխտ կապելով, ժողովրդական և սիրոյ երգերը տեղի տուին հոգեւոր երգերին, պահքը հաճոյք էր դարձել, հաւատացեալներն այժմ համարեա ամեն օր հաղորդում էին ամենքը խումբերով եկեղեցի էին դիմում քարոզ լսելու։ Մի ժամանակակից ակնաստեա և մասնակից սասաց. «Փլորենցիոյ ամբողջ ժողովուրդը կարծես թէ ի սէր Բրիտտոսի յիմարացել է» և սակայն, վրայ բերաւ Ս. «չկայ աւելի բարձր իմաստութիւն, քան ի սէր Բրիտտոսի յիմարութիւնը»։ Նորակազմ այս աստուածպետական հանրապետութիւնն ունէր իւր զանազան տեսակ պաշտօնեաները, որոնցից երիտասարդ ինքուիզիտորները նոյն իսկ իրենց ծնողաց բարոյականի վերայ հսկում էին, տներն էին մանում՝ թղթեր, վատ զրքեր և երաժշտական գործիքներ խլում տանում էին և ոչնչացնում, երեխաների բռնապետութեան մի շրջան էր այս։ Մեծ էր Ս-ի ազդեցութիւնը մանաւանդ կանանց վերայ։ Բարեկենդանի հանգէսների տեղ 1496-ին ծաղկազարդին հազարաւոր երեխաներ և տղամարդիկ սպիտակ զգեստներ հագած թափօր կազմեցին, սրբազան պարեր էին պարում, և ինչ որ իւր բոլորը Ս. արդարացնում էր Ս. գրքով, քարոզելով որ Դաւիթն էլ տապանակի առաջ կաքաւում էր, այլեւ Աւետարանի և Գործք առաքելոցի վկայութեամբ։

Սակայն այս մի արեւելացի, փոխանցիկ շրջան էր։ Չնայելով որ նա առհասարակ քաղաքացւոյ, բայց մանաւանդ հասարակ ժողովրդեան անթիւ բարիքներ արեց իւր քարոզներով, իւր զբաժնի կարգերով, բայց և այնպէս Փլորենտացիք իւրեանց էութեամբ դէմ էին մի այսպիսի աստուածպետական կրօնաւորական վարչութեան և շուտով իրենց մի դաշնակից դասն յանձին ժամանակակից Աղէքսանդր VI Բօրջիա պապի։

Ս. կամենում է Փլորենցիայից սկսելով ամբողջ իտալիան և եկեղեցին կերպարանա-

փոխել, վերանորոգել, ուստի չէր խնայում երբէք Հռովմի և պապի դէմ յարձակուելու։ Երկու ծայրահեղ հակապատկերներ էին Ս. և Բօրջիան։ Ս.-ի հակառակորդները մանաւանդ Մեդիչեանց կուսակիցներն արթուն հրակում էին։ Աղէքսանդր VI պապին ուղարկեցին Ս-ի քարոզներից մինի պատճէնը, որ ուղղում էր պապի անառակութեանց և Հռովմում տիրող ապականութեանց դէմ։ Դոմինիկեանց գեներալ Կարաֆֆայի շնորհիւ պապը սկզբում մեղմ միջոցների դիմեց և մի ճարտար դիւանագէտ և խորամանկ արեղայի միջոցով աշխատեց Ս-ին համոզել, որ սխալում է. բայց երբ չկարողացաւ խոստացաւ Փլորենցիոյ արքեպիսկոպոսութիւնը, կարգինալութեան ծիրանի և խորը Ս. պատասխանեց. «Ես ոչ մի այլ դատակ չեմ ըրձում, բացի մարտիրոսականից, իմ սեփական արիւնով ներկուած»։ Այնուհետեւ պապն աշխատեց նախ քաղցրութեամբ, ապա և իշխանաբար Հռովմ կանչել Ս-ին. բայց սա խուսափեց և շարունակեց Հռովմի դէմ քարոզել։ Ապա պապը 1496-ին արգելեց նորան քարոզելու. «որ առանց եկեղեցու սրբազորման իրեն մարգարէ և Աստուծոյ առաքեալ է անուանում»։ մինչև որ նորա դէմ եղած քննութիւնը վերջանար։ Ս. առ ժամանակ լռեց, բայց յետոյ նորից սկսեց իւր քարոզները ասելով որ այդ սատանայի հրաման է և ոչ պապի։ «Ես պէտք է քարոզեմ, զի Աստուած է ինձ այս բանի համար առաքել, և եթէ ես բովանդակ աշխարհի դէմ կռիւ մղէի, ոչ պաքէն վերջ ի վերջոյ կ'այդթէի»։

Մինչ այս մինչ այն Կարլ Ը. Նեապոլսին տիրելուց յետոյ ստիպուեցաւ իտալիայից յետ քաշուիլ. Ս-ի նորա վերայ դուռն յոյսերը չիրագործուեցան, Փլորենցիան մնաց Փրանսիոյ դաշնակից, մի հանգամանք որ նորան շատ ձգեց իտալացւոյ աչքից։ Ապա 1497-ին ժամտախտն ու սովն սկսեցին քաղաքում ճարակել, որի դէմ անզօր էր Սաւոնարոլան։ Մեդիչեանք, որոնց թիւ ու թիկունք էին Փրանցիսկեանք իբրեւ Ս-ի հակառակորդներ, օգտուելով հանգամանքից՝ կամեցան մի դաւադրութեամբ վերջ տալ այս կրօնաւորի իշխանութեան, բայց անյաջող վերջացաւ, և զըլ-

խաւորներէց 5 հօգի զխառուեցան: Այնուհետեւ Ս-ի կուսակիցները զիննալ ուղեկցում էին նորան եկեղեցի և մինչև բեմ:

Պապը 1497-ին տեղեկանալով ժողովրդի արամադրութեան, բանադրեց Ս-ին իւր անհնազանդութեան և հերձուածի պատճառով և սպառնաց Փլորենցիացւոց բոլոր եկեղեցական պաշտամունքներն արգիլել, եթէ չհնաւան բանադրեալ վարդապետից:

Ս. բեմ դուրս եկաւ հերքեց պապի մեղադրութիւնները, և շնայելով շատ լաւ տեսնում էր գործի վախճանը, բողոքեց Նւրոպայի թագաւորներին և մեղադրում էր պապին, թէ նա զաղբազորձ է՝ պահանջում էր որ մի եկեղեցական ժողով լինի՝ պապին գահէն զրկելու համար: «Հռովմը չէ կարող այս կրակը մարել, և եթէ մարէ, Աստուած մի ուրիշ կրակ կվառէ. արդէն ամէն տեղ վառուած է»:

Այս ճգնաժամին իւր քարոզութիւնները, մարգարէութիւններն արգարացնելու համար Ս. զիմեց աստուածային դատաստանին, որ միջին դարերում կար և որով իբրեւ թէ արդարն ու մեղաւորը ճշմարիտն ու սուտը պիտի որոշուէր: Մի Փրանցիական յանձն առաւ ննթարկուել այդ դատաստանին, իսկ Սաւոնարոլայի կողմից մի ծեր Դոմինիկեան: Խընդիրը մանաւանդ երեք զխաւոր կէտերի մասին էր թէ՛ անհրաժեշտ է և շուտով պէտք է տեղի ունենայ եկեղեցու վերանորոգութիւնը, Ս-ի մարգարէական կոչման և պապի բանադրանքի արժէքի մասին: Կարլ Ը-ի մահուան օրը 1498-ի ապրիլի 7-ին երկու խարոյկներ պատրաստուեցան միմեանց շատ մօտ որոնց միջից պիտի անցնէին հակառակորդ կրօնաւորները, և որ կողմի վարդապետը որ անվնաս անցնէր կրակի միջով, այն կողմն արդար պիտի համարուէր, ըստ այն ժամանակի հասկացողութեան: Երբ երկու կողմից խարոյկին մօտեցան թափօրով, մի տարօրինակ վէճ ծագեցաւ թէ արդեօք երկու կրօնաւորները խաչ թէ նշխարք ձեռին պէտք է անցնէին կրակի միջով, ինչպէս ուզում էր Ս. մինչև որ մի տեղատարափ անձրեւ կրակը շիջուց:

Ժողովուրդը զայրացած յանդիմանում ու հայհոյում էր Սաւանարոլային և անուանում՝ փառ կեղծաւոր, խաբերոյ և սուտ

մարգարէ, այնպէս որ Ս. զինուորների և իւր ձեռքին գանուած նշխարքի շնորհիւ միայն աղատուեցաւ: Միւս օրը հակառակորդները զինեալ վանք մտան և մինչև կէս զիշեր կուռելով եկեղեցուց դուրս հանեցին Ս-ին: Ծանապարհին նորան հարուածում էին ասելով՝ «մարգարէացիր, թէ քեզ ով խփեց»:

Այնուհետեւ ամբողջ աւագ շարաթը նորան քննում էին և տանջում: Ասում են իբրեւ թէ նա խոստովանել է, որ իւր գործունէութեան պատճառ փառամոլութեան և իշխելու տենչն է եղել, սակայն այդ արձանագրութեան խիստութեան մասին հէնց այն ժամանակ արգարացի կասկածներ եղան: Ապա և պապն իւր կողմից քննութիւն նշանակեց, ինչպէս ասում են, կոչելով. «պէտք է մեռնի նա, եթէ նա մինչև իսկ Յովհաննէս Մկրտիչը լինէր»: Այս քրննութեանց ժամանակ նա մարդկային թուլութիւններ ցոյց է տուել, տանջարանում նա խոստովանում էր, ինչ որ պահանջում էին, բայց յետոյ դարձեալ յետս էր կոչում:

Ս. իւր երկու հաւատարիմ համախոհների հետ ի միասին մահուան դատապարտուեցաւ իբրեւ հերետիկոս, հերձուածող, հալածող սուրբ եկեղեցու և ժողովրդի մոլորեցուցիչ: Մորանից հանեցին կրօնաւորի զգեստն ու յանձնեցին քաղաքական իշխանութեան: Բաղաքի հրապարակում նորան իւր ընկերների հետ ի միասին այրեցին: Մորա հակառակորդներից ոմանք գոչում էին, Վէպրդապետ այժմ ժամանակ է մի հրաշք անելու: Սակայն Ս. պատուիրել էր իւր ընկերներին լուռ ու մունջ մեռնել, ինչպէս որ Բրիստոս իբրեւ գառն անմառնչ ի սպանդ վարեցաւ: 1498-ի մայիսի 23-ին, Համբարձման օրը մեռաւ Ս: Մորա աժիւնը Արնոյ գետը հոսեցին: — Եկեղեցու վերանորոգութիւնը շուտով տեղի ունեցաւ, թէև ոչ իսախալում:

Ս. Կ.

